Արձանագրություն N 3
«ՏԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-2016/1ՏՀ» ծածկագրով արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմքով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«28» հոկտեմբերի 2016թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ք. Քաբաբյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Գասպարյանը և Ա.Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Օրդուխանյան

I. Ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրություն մեջ փոփոխություն կատարելու մասին
(Ք. Քաբաբյան)

1. Ընդունել ի գիտություն, որ գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստ, որի ժամանակ արձանագրվեց, որ գնահատող հանձնաժողովի կողմից «ՏԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-2016/1ՏՀ» ծածկագրով բանակցային ընթացակարգի մասնակիցների ներկայացված հայտերի վերանայումից հետո ի հայտ եկավ այն հանգամանքը, որ «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը հաստատվել են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որը տեսանելի է էլեկտրոնային տարբերակով հայտը դիտարկելուց միայն, սակայն չի երևում արտատպված տարբերակում: Հաշվի առնելով այս հանգամանքը, ինչպես նաև «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից գնահատող հանձնաժողովի դիտարկմանը ներկայացված «ԷԿԵՆԳ» ընկերության կողմից տրամադրված՝ թվային ստորագրության ստուգումների արդյունքնում կատարված եզրակացությունը, համաձայն որի հաստատվել է էլեկտրոնային ստորագրության իսկությունը և փաստաթղթերի վավերացված լինելը, հանձնաժողովը որոշեց փոփոխություններ կատարել 2016թ. հոկտեմբերի 25-ի բացման նիստի արձանագրության /այսուհետև՝ արձանագրություն/ մեջ, մասնավորապես.

ա/ արձանագրություն 1-ին կետի գ/ ենթակետը հանել արձանագրության խմբագրված տարբերակից;

բ/ արձանագրություն 2-րդ կետի ա/ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

համապատասխանում են՝ «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ի, «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի և «ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, իսկ բ/ ենթակետը հանել արձանագրության խմբագրված տարբերակից;

գ/ արձանագրություն 3-րդ կետի ա/ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ի, «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի և «ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել «Բավարար», քանի որ համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, իսկ բ/ ենթակետը հանել արձանագրության խմբագրված տարբերակից;

դ/ արձանագրություն 4-րդ կետի ա/ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

- առաջին տեղ զբաղեցնող ճանաչել.

- «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ին՝ 1-ին, 2-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների համար,
- «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ին՝ 3-րդ չափաբաժնի համար,
- «ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ-ին՝ 7-րդ չափաբաժնի համար,

- երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչել.

- «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ին՝ 3-րդ չափաբաժնի համար,
- «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ին՝ 6-րդ չափաբաժնի համար,
- «ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ-ին՝ 4-րդ չափաբաժնի համար:

ե/ արձանագրություն 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

- սույն ընթացակարգի 5-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի համաձայն՝ ոչ մի հայտ չի ներկայացվել,

- սույն կետում նշված չափաբաժնի համար հաստատել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը,

- առաջարկել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներից «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ի և «ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը դիտարկել միայն տվյալ մասնակիցների կողմից առաջին տեղ զբաղեցրած չափաբաժինների մասով:

- փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրվա ժամը 15:00-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն 3-րդ հարկ, N 307 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Ք. Քարաբյան

Անդամներ՝ _____ Ա. Եսայան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Հ. Օրդուխանյան